ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1988 թվականի մարտի 24-ի որոշումը

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՀ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԱԳԱՑՄԱՆ 1988—1995 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն և ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը նշում են, որ Սովետական Միության բոլոր ժողովուրդների եղբայրական օգնությամբ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը զգալի հաջողությունների է հասել սոցիալական ու տնտեսական զարգացման գործում, ապահովվել է ժողովրդական տնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդումը։ Միայն վերջին երեք հնգամյակում արդյունաբերական արտադրության ծավալը մարզում մեծացել է ավելի քան 3 անգամ, գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը՝ 1,5 անգամ։ Էապես աճել է մարզի մասնակցությունը աշխատանքի հանրապետական ու ընդհանուր միութենական բաժանմանը, ակտիվորեն են զարգանում ինտեգրացման պրոցեսները։ Բարելավվել է բնակչության ապահովվածությունը բնակմակերեսով, հիվանդանոցներով, գրադարաններով, ակումբներով։

Դրա հետ մեկտեղ վերջին ժամանակներս նկատվել է հանրային արտադրության արդյունավետության նվազման միտում։ Չեն կատարվում կապիտալ շինարարության, բնակելի տների գործարկման պլանները։ Սոցիալ-կուլտուրական ոլորտի զարգացումը հետ է մնում բնակչության աճող պահանջներից։ Աշխատավորական շատ կոլեկտիվներում վատացել է կարգապահությունը, իջել է պատասխանատվությունը արտադրանքի արտադրության պլանները և դրանց մատակարարման պայմանագրային պարտավորությունները կատարելու համար։ Մարզի ձեռնարկությունների անկայուն աշխատանքը բացասաբար է անդրադառնում ժողովրդական տնտեսության գործերի վիճակի վրա։

Նշված թերությունները ինչպես տեղական, այնպես էլ հանրապետական կուսակցական և սովետական մարմինների ղեկավար և կազմակերպչական դերը թուլացնելու, ընդլայնվող դեմոկրատիայի պայմաններում, էկոնոմիկայի կառավարման արմատական ռեֆորմի իրագործման պայմաններում նրանց դանդաղ վերակառուցման, մասսաների շրջանում կուսակցական-քաղաքական աշխատանքի մակարդակն իջեցնելու հետևանքն են։

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալական ու տնտեսական հետագա զարգացումն ապահովելու և հիշյալ թերությունները վերացնելու նպատակով ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն և ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը որոշում են.

1. Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմին և Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին, Ադրբեջանի կոմկուսի Լեռնային Ղարաբաղի մարզկոմին և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների սովետի գործկոմին, մարզի կուսակցական ու սովետական մյուս մարմիններին և սկզբնական կուսակցական կազմակերպություններին ուժեղացնել աշխատավորների մոբիլիզացման քաղաքական ու կազմակերպչական աշխատանքը՝ իրագործելու համար ՍՄԿԿ XXVII համագումարի, ՍՄԿԿ Կենտկոմի 1987 թվականի հունիսյան և 1988 թվականի փետրվարյան պլենումների որոշումները, կուսակցության՝ վերակառուցման կուրսը, գիտատեխնիկական առաջադիմության նվաճումների և առաջավոր փորձի օգտագործման, հանրային արտադրության ինտենսիվացման հիման վրա սոցիալ-տնտեսական զարգացումն արագաց-

Գլխավոր և անհետաձգելի խնդիր համարել աշխատավորների, ամբողջ բնակչության դաստիարակումը ինտերնացիոնալիզմի, եղբայրական բարեկամության ու փոխօգնության ոգով, վճռականորեն կանխարգելել տարբեր ժողովուրդների ազգային զգացմունքների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի և նացիոնալիզմի նվազագույն դրսևորումները։

Մշտական ուշադրություն նվիրել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տնտեսական ու սոցիալական զարգացմանը։ ՍՍՀՄ պետպլանի, ՍՍՀՄ գիտության ու տեխնիկայի պետական կոմիտեի և ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ներգրավմամբ 1988—1989 թվականներին մշակել այդ մարզի տնտեսական ու սոցիալական զարգացման մինչև 2005 թվականն ընկած ժամանակաշրջանի կոմպլեքսային ծրագիր, որը նախատեսի մարզի արտադրողական ուժերի համակողմանի զարգացում։

Մշակել և 1989 թվականից սկսած ձեռնամուխ լինել սոցիալական ոլորտի ավելի արագ զարգացման կոմպլեքսային միջոցառումների իրագործմանը, որոնք ապահովեն տասներեքերորդ հնգամյակում կապիտալ շինարարության ծավալների մեծացում 1,4 անգամ, որպեսզի մինչև 2000 թվականը յուրաքանչյուր ընտանիք ունենա առանձին բնակարան կամ անհատական բնակելի տուն։ Մինչև 1995 թվականը ապահովել հանրակրթական դպրոցներում անցում կատարելը հիմնական միահերթ ուսուցման, և այս խնդրի լուծման համար կառուցել 9—10 դպրոց։

1989—1990 թվականների և 13-րդ հնգամյակի պլաններում նախատեսել կառուցելու 850 տեղանոց մշակույթի պալատ (Ստեփանակերտ քաղաքում), 400 մահճակալանոց մարզային հիվանդանոց, հերթափոխում 600 հաճախմամբ պոլիկլինիկայով, պիոներների տուն, քաղաքային հիվանդանոց, ինչպես նաև բնակելի տներ և սոցիալական այլ օբյեկտներ ըստ № 1 հավելվածի։

2. ՍՍՀՄ կապի մինիստրությանը և ՍՍՀՄ հեռուստատեսության ու ռադիոհաղորդումների պետական կոմիտեին՝ 1988 թվականին մշակել և 1988—1989 թվականներին իրագործել կոմպլեքսային միջոցառումներ, որպեսզի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և հարակից շրջանների համար ապահովվի ընդհանուր միութենական հեռուստատեսային ծրագրի որակյալ պատկերաստացումը, ինչպես նաև այդ ռեգիոնում ադրբեջանական ու հայկական հեռուստատեսության ծրագրերի լրիվ ծավալի ընդունումը (այդ ծրագրերի կազմում տեղական հեռուստատեսության ծրագրի պատկերափոխման հնարավորության հետ միասին)։

3. ՍՍՀՄ կուլտուրայի մինիստրությանն ու Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին, հաշվի առնելով Ադրբեջանական ՍՍՀ-ում ապրող հայ բնակչության ցանկությունները.

քննության առնել Բաքու քաղաքում հայկական դրամատիկական թատրոն ստեղծելու հարցը.

մշակել և իրականացնել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքում գտնվող պատմական ու մշակույթի հուշարձանների վերականգնման ու վերանորոգման աշխատանքների հետագա անցկացման միջոցառումների համալիր, նկատի ունենալով այդ աշխատանքների մեջ ներգրավել վերականգնման մասնագետ հայաստանցի վարպետների։

4. ՍՍՀՄ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեին՝ տասներկուերորդ հնգամյակում վերակառուցել Ստեփանակերտ քաղաքի ու Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի շրջանային կենտրոնների տպարանները, ընդլայնել հայերեն գրականության լույսընծայումը, նկատի ունենալով ապահովել այդ գրականության նկատմամբ մարզի բնակչության պահանջմունքի ապահովումը։

5. ՍՍՀՄ քաղաքացիական ավիացիայի մինիստրությանը 1989 թվականին քննության առնել Ստեփանակերտ քաղաքի օդանավակայանի վերակառուցման հարցը (ներառյալ այն ժամանակակից ռադիոնավավարական սարքավորումներով հանդերձավորումը) մեծ ուղևորատարությամբ ինքնաթիռների ընդունման համար և անհրաժեշտության դեպքում համապատասխան առաջարկություններ մտցնել տասներեքերորդ հնգամյակի պլանի նախագիծը նախապատրաստելիս։

6. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության ջրամատակարարումը բարելավելու և ոռոգելի հողագործությունը զարգացնելու համար ՍՍՀՄ մելիորացիայի ու ջրային տնտեսության մինիստրությանը և ՍՍՀՄ պետագրոարդին.

ապահովել 1988—1990 թվականներին Բադարաչայ գետի վրա 30 միլիոն խորանարդ մետր ծավալով ջրամբարի նախագծումը և նրա կառուցումը հիմնականում տասներեքերորդ հնգամյակում, նկատի ունենալով առաջին հերթը գործարկել 1993 թվականին.

քննության առնել տասներեքերորդ-տասնչորսերորդ հնգամյակներում Կարկառչայ գետի վրա 20 միլիոն խորանարդ մետր ծավալով ջրամբարի նախագծման ու շինարարության առաջարկությունը և ընդունել համապատասխան որոշում.

1988—1990 թվականների համար «Ադրգիպմելիոռշինին» հատկացնել 12 միլիոն ռուբլի գումարով պետական կենտրոնացված կապիտալ ներդրումների լրացուցիչ լիմիտներ Բադարաչայ և Կարկառչայ գետերի վրա ջրամբարների կառուցման նախագծային-նախահաշվային փաստաթղթերի մշակման և շինարարության նախապատրաստական աշխատանքների անցկացման համար, ինչպես նաև առանձնացնել անհրաժեշտ նյութական ռեսուրսներ.

«Ադրգյուղջրմուղշին» միավորմանը հատկացնել պետական կենտրոնացված կապիտալ ներդրումներ և նյութատեխնիկական ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ են 1989 թվականին ինքնավար մարզի տարածքում Ղարաբաղի խմբային ջրմուղի շինարարության ավարտման, ինչպես նաև հեռանկարում բոլոր գյուղական բնակավայրերը կենտրոնացված ջրամատակարարմամբ ապահովվելու համար։

Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին՝ տասներկուերորդ հնգամյակում իրականացնել Ստեփանակերտ քաղաքը և մարզի շրջանային կենտրոնները կայուն ջրամատակարարմամբ ապահովելու միջոցառումներ։

7. Բնակչությանը սննդամթերքի մատակարարումը բարելավելու և գյուղատնտեսական հումքի վերամշակումն ու պահպանումը ապահովելու համար ՍՍՀՄ պետագրոարդին և Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին՝ 1988—1994 թվականներին ապահովել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում ագրոարդյունաբերական համալիրի օբյեկտների շինարարությունը։

8. ՍՍՀՄ հացամթերքների մինիստրությանը՝ 1989 թվականին ապահովել Ասկերան ավանում օրական 250 տոննա կարողությամբ համակցված կերերի գործարանի նախագծային-նախահաշվային փաստաթղթերի մշակումը և 1990—1991 թվականներին՝ գործարանի շինարարությունը։

9. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության տրանսպորտային սպասարկման հետագա բարելավման նպատակով Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին՝ մշակել և 1989 թվականին հաստատել մարզում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների և ներտնտեսային ճանապարհների զարգացման սխեման, ստեղծել համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ, ճանապարհային շինարարության ծավալները 1,5—2 անգամ մեծացնելու համար։ 1988—1990 թվականներին վերակառուցել Գորիս — Լաչին—Ստեփանակերտ ավտոմոբիլային ճանապարհը 75 կիլոմետր երկարությամբ։

10. ՍՍՀՄ էներգետիկայի ու էլեկտրիֆիկացիայի մինիստրությանը՝ ապահովել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում գտնվող արտադրական և կուլտուր-կենցաղային օբյեկտների էլեկտրամատակարարման հուսալիությունը, որի համար էլեկտրացանցային օբյեկտների շինարարության ու վերակառուցման նպատակով Ադրգլխէներգոյին հատկացնել անհրաժեշտ մեքենաներ ու մեխանիզմներ։

11. ՍՍՀՄ գազի արդյունաբերության մինիստրությանը՝ 1989 թվականի պլանում «Ադրտրանսգազ» միավորման համար նախատեսել դեպի Հադրութ ավան կողմնատար գազամուղի շինարարության առաջադրանք (Ֆիզուլի—Ջերբայիլ գազամուղի կազմում), ինչպես նաև 1989 թվականին ապահովել Միր-Բաշիր—Մարտակերտ—Քելբաջար կողմնատար գազամուղի նախագծումը, իսկ 1990—1991 թվականներին՝ դրա շինարարությունը։

ՍՍՀՄ պետագրոարդին՝ ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1989—1990 թվականների և տասներեքերորդ հնգամյակի պլանների նախագծերը մշակելիս նախատեսել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակավայրերում 550 կիլոմետր կողմնատար գազամուղների և բաշխիչ գազացանցերի շինարարություն։

12. Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին՝ ՍՍՀՄ համապատասխան մինիստրությունների ու գերատեսչությունների հետ համատեղ մշակել և իրականացնել այնպիսի միջոցառումների կոմպլեքս, որոնք ապահովեն մինչև տասներեքերորդ հնգամյակի վերջը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում արդյունաբերական արտադրանքի արտադրության ավելացում 1,5—1,6 անգամ, այդ թվում մեքենաշինական արտադրանքինը՝ 2,6 անգամ, գյուղատնտեսության համախառն արտադրանքինը՝ 1,3—1,4 անգամ, ինչպես նաև ժողովրդական սպառման ապրանքների և շինանյութերի նշանակալի աճ։

Այդ նպատակների համար նախատեսել կապիտալ ներդրումների և կապալային աշխատանքների, ֆինանսական և նյութական ռեսուրսների լիմիտների հատկացում, ստեղծել նորոգման, շինարարական, ավտոտրանսպորտային, ճանապարհային կազմակերպությունների ժամանակակից նյութատեխնիկական բազա, դրանք ապահովելով անհրաժեշտ մեքենաներով, մեխանիզմներով ու սարքավորումներով։

13. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության ռացիոնալ զբաղվածություն ապահովելու և նրա արդյունաբերական պոտենցիալը զարգացնելու համար ՍՍՀՄ էլեկտրատեխնիկական արդյունաբերության մինիստրությանը, ՍՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերության մինիստրությանը, ՍՍՀՄ ռադիոարդյունաբերության մինիստրությանը, ՍՍՀՄ թեթև արդյունաբերության մինիստրությանը և ՍՍՀՄ անտառափայտի արդյունաբերության մինիստրությանը՝ 1988—1994 թվականներին ապահովել ենթակա ձեռնարկությունների ու դրանց մասնաճյուղերի նախագծում, կառուցում, ընդլայնում և վերակառուցում։

Վերոհիշյալ մինիստրություններին պարտավորեցնել ինքնավար մարզի ժողովրդական դեպուտատների տեղական սովետներին բաժնեմասային մասնակցության կարգով միջոցներ փոխանցել սոցիալական ոլորտի և կոմունալ տնտեսության օբյեկտների զարգացման համար։ ՍՍՀՄ թեթև արդյունաբերության մինիստրությանն ու ՍՍՀՄ անտառափայտի արդյունաբերության մինիստրությանը՝ հիշյալ աշխատանքները տնտհաշվարկային եղանակով կատարելու համար 1989—1990 թվականներին Ադրբեջանական ՍՍՀ թեթև արդյունաբերության մինիստրությանը ու Ադրբեջանական ՍՍՀ անտառափայտի ու փայտամշակման արդյունաբերության մինիստրությանը օգնություն ցույց տալ անհրաժեշտ մեքենաներով ու մեխանիզմներով ապահովելու գործում։

14. Շինարարության զգալիորեն աճող ծավալների կատարման նպատակով Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին՝ ՍՍՀՄ պետշինի և ՍՍՀՄ պետպլանի հետ համատեղ մշակել և 1988 թվականի առաջին կիսամյակում հաստատել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի շինարարական կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի զարգացման 1989—1995 թվականների կոնկրետ ծրագիր, նկատի ունենալով տասներեքերորդ հնգամյակում կատարվող շինմոնտաժային աշխատանքների ծավալը մեծացնել 1,8—2 անգամ, առաջին հերթին նախատեսելով ստեղծել խոշորապանել տնաշինության կարողություններ, ինչպես նաև հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների և տեղական շինանյութերի արտադրության կարողություններ։

ՍՍՀՄ շինանյութերի արդյունաբերության մինիստրությանը՝ 1989—1990 թվականներին Ադրբեջանական ՍՍՀ շինանյութերի արդյունաբերության մինիստրությանը հատկացնել քարամշակման հաստոցներ, մեքենաներ ու մեխանիզմներ Ստեփանակերտ քաղաքի շինանյութերի կոմբինատի համալրման համար։

ՍՍՀՄ շինարարական, ճանապարհային ու կոմունալ մեքենաշինության մինիստրությանը և ՍՍՀՄ պետմատին՝ ապահովել տարեկան յուրաքանչյուրը 5 միլիոն հատ աղյուս կարողությամբ չորս բարձրմեքենայացված կոմպլեկտային գործարանների պատրաստումը ու 1989—1992 թվականներին դրանց մատակարարումը Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին։

ՍՍՀՄ պետշինին՝ 1989 թվականին ապահովել Ադրբեջանական ՍՍՀ պետշինի «Ադրպետնախագիծ» նախագծային ինստիտուտի մասնաճյուղի ստեղծումը Ստեփանակերտ քաղաքում։

Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին, ՍՍՀՄ համապատասխան մինիստրություններին և գերատեսչություններին թույլ տալ որպես բացառություն 1988—1989 թվականներին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում արտադրական, սոցիալական օբյեկտների շինարարություն իրականացնելու ըստ աշխատանքային գծագրերի ու նախահաշիվների՝ նախքան սահմանված կարգով նախագծերի հաստատումը։

15. Սույն որոշմամբ նախատեսված առաջադրանքների կատարման աշխատանքները սկսելու համար՝

1988 թվականին Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդի համար պետական կենտրոնացված կապիտալ ներդրումների լիմիտն ավելացնել 12,4 միլիոն ռուբլով, այդ թվում շինմոնտաժային աշխատանքներինը՝ 3,9 միլիոն ռուբլով։ Նշված կապիտալ ներդրումների ֆինանսավորումը կատարել ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի ռեզերվային ֆոնդի հաշվին. ՍՍՀՄ պետմատին, ՍՍՀՄ պետագրոարդին և ՍՍՀՄ մելիորացման ու ջրային տնտեսության մինիստրությանը՝ 1988 թվականին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կարիքների համար լրացուցիչ նյութատեխնիկական ռեսուրսներ դնել Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդի տրամադրության տակ։

16. ՍՍՀՄ պետպլանին՝ Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդի համար 1989—1990 թվականներին հնգամյա պլանի առաջադրանքներից բացի և տասներեքերորդ հնգամյակի հաշվարկներով ֆինանսավորման և նյութական ռեսուրսների բոլոր աղբյուրների գծով նախատեսել պետական կապիտալ ներդրումների լիմիտներ այնպիսի չափերով, որոնք ապահովեն սույն որոշմամբ նախատեսված առաջադրանքների կատարումը։

17. ՍՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեին, Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին՝ ապահովել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում, ինչպես նաև Ադրբեջանական ՍՍՀ-ի մյուս շրջաններում գտնվող հայկական դպրոցներում աշխատանքը կատարելագործելու կազմակերպական-մանկավարժական և մեթոդական համատեղ միջոցառումների մշակումն ու իրագործումը։

18. ՍՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեին՝ Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդի և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի հետ համատեղ 1988 թվականից սկսած մասնագետների կոոպերացված պատրաստման պլաններով նախատեսել, որ Հայկական ՍՍՀ-ի տարածքում գտնվող բուհերում ուսանողական տեղեր հատկացվեն Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում ապրող անձանց նպատակային ընդունելության համար։

19. ՍՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեին և Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին՝ բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման որակը բարձրացնելու և բարձրորակ կադրերի նկատմամբ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պահանջմունքներն ավելի լրիվ բավարարելու նպատակով մշակել և իրականացնել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի նյութատեխնիկական բազայի արագացված զարգացման, ուսուցման արդիական տեխնիկական միջոցներով, անհրաժեշտ ուսումնալաբորատոր սարքավորումներով և էլեկտրոնային հաշվողական տեխնիկայով նրա հանդերձման միջոցառումներ։

20. Հիմնարկների և կազմակերպությունների ցուցանակներին նաև հայերեն գրելու Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում ապրող քաղաքացիների ցանկությունների առթիվ Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին հանձնարարել քննարկել և լուծել այդ հարցը։

21. Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմին, Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին, Ադրբեջանի կոմկուսի Լեռնային Ղարաբաղի մարզկոմին և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների սովետի գործկոմին՝ կուսակցական, սովետական ու տնտեսական մարմինների, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունների կազմակերպչական ու քաղաքական աշխատանքը նպատակամղել սույն որոշմամբ նախատեսված առաջադրանքների կատարմանը, աշխատավորների ջանքերը կենտրոնացնել նախ և առաջ տնտեսական ու սոցիալական խնդիրների լուծման վրա, ժողովրդական դեպուտատների տեղական սովետներին տրամադրված իրավունքներն ըստ ամենայնի օգտագործել մարզի ժողովրդական տնտեսության պլանավորման ու կառավարման գործում.

Ըստ ամենայնի զարգացնել աշխատավորների նախաձեռնությունն ու ստեղծագործությունը, եռանդագին պաշտպանել նրանց ձգտումը՝ հայրենասիրական գործերով պատասխանելու վերակառուցումն արագացնելու և խորացնելու, աշխատանքի ոճը կատարելագործելու, քննադատությունն ու ինքնաքննադատությունը զարգացնելու, տնտեսական ու սոցիալական զարգացման հարցերը լուծելիս լայն հրապարակայնություն ապահովելու ՍՄԿԿ կոչին։

Մասսայական ինֆորմացիայի և պրոպագանդայի միջոցներով սիստեմատիկաբար ու բազմակողմանիորեն լուսաբանել ռեգիոնի սոցիալական և տնտեսական զարգացման պրոբլեմները, խորապես վերլուծել պլանային առաջադրանքների կատարման ընթացքը, ընդհանրացնել իրական վերակառուցման փորձը, պրոպագանդել տնտեսավարման և աշխատանքի արդյունավետության բարձրացման արդիական մեթոդները։

* * *

ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն և ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը հաստատ համոզմունք են հայտնում, որ Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կոմունիստները, բոլոր աշխատավորները կցուցաբերեն քաղաքական հասունություն, պահի պատասխանատվության ըմբռնում, կդրսևորեն համախմբվածություն ու բարձր կազմակերպվածություն։ Մարզի աշխատավորական կոլեկտիվների պարտքն է ամրապնդել հայ, ադրբեջանական և մեր երկրի մյուս ժողովուրդների բարեկամությունը, բոլոր ուժերը ուղղել թույլ տրված թերացման հաղթահարմանը, 1988 թվականի և ամբողջությամբ վերցրած տասներկուերորդ հնգամյակի պլանների անպայման կատարմանը։

ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի
քարտուղար Մ. ԳՈՐԲԱՉՈՎ

ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ
Ն. ՌԻԺԿՈՎ